

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻԳԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

27.03.2015թ.

„Գարունը իմ աչքերով,, միջոցառում նվիրված Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին

Ցեղասպանության 100-րդ տարելիցի շրջանակներում մարտի 27-ին Գյումրիում համատեղ ծրագրով հանդես եկան Գյումրու պետական սիմֆոնիկ նվագախումբը՝ գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Երվանդ Վարդայան, և Հայ Առաքելական եկեղեցու Գյումրու հայորդաց տան սաները:

13.04.2015թ

Մեծ Եղեռնի 100 ամյակի միջոցառում Տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղում

Ապրիլի 13-ին Տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղում տեղի ունեցավ մշակութային ցերեկույթ նվիրված Հայոց Մեծ Եղեռնի 100 ամյակին:

14.04.2015թ

Միջոցառում Գյումրու թիվ 10 դպրոցում

Ապրիլի 14-ին Գյումրու թիվ 10 միջնակարգ դպրոցում, դպրոցի, „Արաքս,, հկ-ի և Շիրակի մարզպետարանի աջակցությամբ, բացվեց Հայոց Մեծ Եղեռնին նվիրված անկյուն:

14.04.2015թ

Խաչքարի բացման և ծառատունկի արարողություն Մեծ Մանթաշի համայնքում

Ապրիլի 14-ին Շիրակի մարզպետ Ֆելիքս Յուլալյանը մարզի Մեծ մանթաշի համայնքում մասնակցեց Հայոց Մեծ Եղեռնի 100 ամյակին նվիրված խաչքարի բացման արարողությանը: Համայնքի բնակիչների և համայնքի ղեկավար Ստյոպա Չոբանյանի նախաձեռնությամբ և ֆինանսական աջակցությամբ, Գյումրեցի քանդակագործ Աշոտ Ֆարմանյանը կյանքի էր կոչել գեղեցիկ հուշաքար խաչքար:

16.04.2015թ.

Խաչքարի բացման արարողություն Ձիթհանքով համայնքում

Ապրիլի 16-ին Շիրակի մարզի Ձիթհանքով համայնքում տեղի ունեցավ Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված խաչքարի բացման արարողություն:

17.04.2015թ

Ցուցահանդես նվիրված Մեծ Եղեռնի 100 ամյակին

ՀՀ Արվեստի վաստակավոր գործիչ, Ազգային պատկերասրահի և Մ. Սարյանի տուն թանգարանի նախկին տնօրեն Շահեն Խաչատրյանի նախաձեռնությամբ ապրիլի 17-ին Գյումրու „Ձիթողցյանների,, տուն թանգարանում տեղի ունեցավ Մեծ Եղեռնի 100 ամյա տարելիցին նվիրված „Ցավի գույնը,, ցուցահանդեսի բացման արարողությունը:

17.04.2015թ

Արխիվային փաստաթղթերի ցուցադրություն Գյումրիում

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների ցանկում ՀՀ ՏԿԱԻՆ „Հայաստանի ազգային արխիվ,, ՊՈԱԿ-ի տնօրինությունը նախաձեռնել է փաստաթղթերի և լուսանկարների ցուցադրություն կազմել ՀՀ այն համայնքներում, որտեղ 1915 թվականից մինչև 1920-ական թվականները գործել են որբանոցներ, որոնցում ապաստան էին գտել ցեղասպանության զոհերի մանկահասակ զավակները □

20.04.2015թ.

Գրական-երաժշտական ցերեկույթ Շերամի անվան դպրոցում

Ապրիլի 20-ին Գյումրու Շերամի անվան թիվ 5 երաժշտական դպրոցի դահլիճում տեղի ունեցավ գրական-երաժշտական ցերեկույթ նվիրված Հայոց Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցին: Միջոցառմանը մասնակցում էին մշակույթի հարցերով Շիրակի մարզպետի խորհրդական Հասմիկ Կիրակոսյանը, Գյումրու քաղաքապետի տեղակալ Վաղինակ Մխիթարյանը, մարզպետարանի և քաղաքապետարանի բաժինների պետեր, երաժշտական դպրոցների տնօրեններ:

21.04.2015թ

Հայոց Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցին նվիրված միջոցառում Գյումրու թիվ 40 հիմնական դպրոցում

Ապրիլի 21-ին Հայոց Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակում, Գյումրու թիվ 40 հիմնական դպրոցում գեղեցիկ համատեղ ցերեկույթ էին կազմակերպել դպրոցի տնօրինությունը, Գյումրու Շիշյանի անվան թիվ 6 երաժշտական դպրոցի տնօրինությունը հետ: Թիվ 40 դպրոցի սաները „Նեմեսիս,, գործողությունների շրջանակում ներկայացրեցին Սողոմոն Թեհլերյանի դատավարության բեմականացումը, որից հետո համերգային ծրագրով հանդես եկան Շիշյանի անվան թիվ 6 երաժշտական դպրոցի սաները:

21.04.2015թ

Խաչքարի բացման արարողություն Հառիճ համայնքում

Ապրիլի 21-ին Հայոց Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակում, Խաչքար հուշակոթողի բացման արարողություն տեղի ունեցավ Շիրակի մարզի, Արթիկի նախկին տարածաշրջանի Հառիճի համայնքում

22.04.2015թ

Սողոմոն Թեհլերյանի արձանը բացվեց Մարալիկ քաղաքում

Ապրիլի 22-ին Հայոց Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակում մարզի Մարալիկ համայնքում մեծ հանդիսությամբ, տեղի ունեցավ Սողոմոն Թեհլերյանի արձանի բացման արարողությունը, որին իրենց մասնակցությունն էին բերել մարզի գրեթե բոլոր պաշտոնյաները Շիրակի մարզպետ Ֆելիքս Յուլակյանի գլխավորությամբ: Միջոցառմանը մասնակցում էին մեծ թվով ԱԺ պատգամավորներ:

22.04.2015թ

Խաչքարի բացման արարողություն Ջրառատի համայնքում

Ապրիլի 22-ին Հայոց Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակում Խաչքար հուշակոթողի բացման արարողություն տեղի ունեցավ մարզի Ախուրյանի նախկին տարածաշրջանի Ջրառատի /Չրախլի որը թարգմանաբար նշանակում է <<լույսով լի >>/ համայնքում:

23.04.2015թ

Խաչքարի բացման արարողություն Ձորակապի համայնքում

Ապրիլի 23-ին Հայոց Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակում մարզի Ձորակապի համայնքում տեղի ունեցավ Խաչքարի բացման արարողությունը: Մարալիկցի վարպետ Պարույրի հերթական խաչքարը Ջուղայի գազանաբար ոչնչացված խաչքարերի շարքից է, որն իր շքեղությամբ տեղադրվեց Մեծ Հայրենականում զոհված Ձորակապցիների հուշարձան կոթողի հարևանությամբ:

24.04.2015թ

Ապրիլի 24-ին Հայոց Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցի միջոցառումներ Արթիկ քաղաքում

Ապրիլի 24-ին Հայոց Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցի միջոցառումներ տեղի ունեցավ նաև մարզի Արթիկ քաղաքում: Արթիկում միջոցառումները մեկնարկեցին համաքաղաքային աննախադեպ բազմամարդ երթով և ծաղիկների խոնարհմամբ Բարեկամության այգում տեղադրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված խաչքար-հուշարձանի առջև: Արարողության ընթացքում մանկական 100-ձայնյա երգչախումբը կատարեց Կոմիտասի ստեղծագործությունների շարան:

24.04.2015թ

1.500.000 Սրբադասված նահատակների ոգեկոչման արարողություններ Շիրակի մարզում

Ապրիլի 24-ին Հայոց Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակում, Գյումրու „Բագրատունյաց,, պուրակում տեղի ունեցավ Գյումրեցի քանդակագործ Ֆրիդ Սողոյանի „Վերածնունդ,, քանդակի բացման արարողությունը: Մեկ այլ ծնունդով Գյումրեցի, մոսկվայաբնակ գործարար Արթուր Անտոնյանի հովանավորությամբ, Գյումրու քաղաքապետի և քաղաքապետարանի մասնակցությամբ, Խաղաղության օղակի պուրակը լրիվ կերպարանափոխվել, բարեկարգվել, ստացել էր նոր տեսք ու նշանակություն:

25.04.2015թ

„Փրկության քարտեզ,, ֆիլմի պրեմիերան Գյումրիում

Ապրիլի 25-ին Գյումրիի «Հոկտեմբեր» կինոթատրոնում տեղի ունեցավ «ՄԱՆ ՓԻՔՉԵՐՍ » Ստուդիո ընկերության (Հայաստան) արտադրած նոր խաղարկային-փաստավավերագրական լիամետրաժ «Փրկության քարտեզ» ֆիլմի պրեմիերան: 100 բուպե տևողությամբ կինոնկարի ռեժիսորն Արամ Շահբազյանն է՝ Ֆիլմը փաստագրություն է և կառուցված է բացառապես իրական փաստերի վրա: Ֆիլմի հերոսները պատմությանը հայտնի հուսմանիստներն են, մարդիկ, ովքեր ականտեսն են եղել Հայոց ցեղասպանության արհավիրքների ու խեղվածքագումնարդկային կյանքերի՝

27.04.2015թ

Ծառատունկ Արթիկում

Շիրակի մարզի <<վարդագույն տուֆի հայրենիք>> Արթիկ քաղաքի հյուսիս-արևելյան պաշտպանիչ ծառաշերտի ստեղծման համար տնկվել է ավելի քան 1000 տնկի: Կանաչապատվող տարածքը գտնվում է Արթիկ քաղաքի և քարհանքերի միջև:

27.04.2015թ

Խաչքարի բացման արարողություն Միզավետի համայնքում

Ապրիլի 27-ին Շիրակի մարզի Սիգավետի համայնքում տեղի ունեցավ Խաչքարի բացման արարողություն նվիրված Հայոց Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցին: Գյուղի նախկին բնակիչ, ներկայումս ռուսաստանաբնակ Աշոտ Քոթանջյանի աջակցությամբ համայնքի եկեղեցու հարևանությամբ տեղադրվել էր շատ գեղեցիկ Խաչքար:

29.04.2015թ

Եկեղեցու օծման, հուշակոթող պանթեոնի և Խաչքարի բացման արարողություն Գետափ համայնքում

Ապրիլի 29-ին Շիրակի մարզի Արթիկի նախկին տարածաշրջանի Գետափ համայնքում, մեծ շուքով վերաբացվեց համայնքի Սուրբ Աստվածածին եկեղեցին, որն, ինչպես և ուրիշ շատ եկեղեցիներ, Խորհրդային տարիներին ծառայել են որպես ցորենի պահեստ: Գյուղի բնակիչ, , ազատամարտիկ, շինարար Սամվել Խաչատրյանի անմիջական նախաձեռնությամբ և միջոցներով իրականացվել է այդ աստվածահաճո նախաձեռնությունը:

02.05.2015թ

„Ոգեկոչում,, միջոցառում Գյումրու Հայորդաց տանը

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները դեռ կշարունակվեն ամբողջ տարին: Մայիսի 2-ին Գյումրու Հայորդաց տանը տեղի ունեցավ „Ոգեկոչում,, խորագիրը կրող միջոցառումը, որի հիմնական միտքն ու գաղափարը, լացից ու ողբից, հաղթանակի ու պահանջատիրության անցումն էր:

06.05.2015թ

Խաչքարի բացման արարողություն Վահրամաբերդի համայնքում

Մայիսի 6ին Շիրակի մարզի Վահրամաբերդի համայնքում տեղի ունեցավ հերթական Խաչքարի բացման արարողությունը նվիրված Հայոց Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցին:

17.05.2015թ

Աշակերտական ընթերցումներ նվիրված Հայոց Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցին

Մայիսի 17-ին ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի

կրթության, մշակույթի և սպորտի վարչության հետ համատեղ Գյումրու թիվ 20 դպրոցում անցկացրեց <<Աշակերտական գիտական ընթերցումներ>> միջոցառումը նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին, որի նպատակն էր ապահովել հայոց ցեղասպանության հիմնախնդիրների իմացությունը և ցեղասպանության հարցում համահայկական մտածողության ձևավորումը, բարձրացնել ազգային խնդիրների նկատմամբ պատասխանատվության զգացումը և հայոց պատմության նկատմամբ հետաքրքրությունը:

20.06.2015թ

Ֆելիքս Միմոնյանի/թավջութակահար/ և Ազգային կամերային նվագախմբի համատեղ համերգը „Տեսանելիից վեր,, նվիրված Հայոց Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցին

Կազմակերպիչներ „Գյումրու ընկերներ „ հիմնադրամ

21.06.2015թ

„ACCOLADA,, Երիտասարդական Կամերային նվագախմբի համերգը՝ „Խավարից դեպի լույս,, նվիրված Հայոց Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻԳԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱԹՈՒՄՆԵՐԻ

ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ՝

ՀԱՍՄԻԿ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ